

չէր այլև եկամտի աղբյուրներ ալ շուններ, քանի որ դադրած էին համերգներն ու դասերը: Կայրեր հաշիվով, թեև իր կենցաղին մեջ մեծ փոփոխություն մը չկար:

Մեծ հաճույք էր իրեն համար շամիչով թեյ խմելը, — շաքարի շոգոթիան պատճառավ — իրեն այցելող փոքրաթիվ բարեկամներու հետ: Իր ծանոթներեն և բարեկամներեն առնաք որ Պոլիս կգտնվեին, կզգուշանային այցելութենե: Այս զգուշությունը երկու կողմին էր. վարդապետն ալ կվախնար ոստիկանության ուշադրությունը հրավիրել:

Այսպես անցավ 1915-ը²⁷:

Քանի մը տող ալ Աղավնի Մեսրոպյանի հուշերեն.

«1915 թվին, աքսորեն վերադարձն հետո, երբ Կոմիտաս հոգեբուժարանը կգտնվեր, Հրանտ Ասատուրենց տանը, գյուղացի թուրք ուսանող մը հետաքրքրվեցավ մեծ երաժշտ-

տագետի առողջութիամբ, դատապարտելով մեղապարտ իթթիհադականները: «Կզարմանամ, Հրանտ էֆենտիս, — կըսեր ան, — թե Կոմիտասի պես շեհիտե մը ի՞նչ կուզեին»:

Հրանտ Ասատուր փութկոտություն վրատվավ. «Ինչու կզարմանաս, Կոմիտասը այդ վիճակին բերող գազանները ի՞նչ կուզեին հարյուր հազարավոր անմեղ մանուկներեն, կիներեն ու աղջիկներեն, որոնց վիշտը չկըրցավ տանիլ ան, և այսօր, կենդանի մեռել մը դարձած՝ մեզ բոլորս սուգի է մատնած...»²⁸:

Պետք է վերապահություն կարգալ Աղավնի Մեսրոպյանի հուշերուն այս հատվածը ևս: 1915-ին Կոմիտաս դեռ բուժարան մտած չէր, և զգուշ, երկշոտ, իր ստվերեն իսկ վախցող այն մարդը որ Հրանտ Ասատուրն էր, հեռու էր թուրքի մը այդ ձևով արտահայտվելու քաջութենեն:

²⁸ «Ժամանակակիցները Կոմիտասի մասին», էջ 303. (Շարունակելի)

²⁷ «Արածանի», Փարիզ, 1940, էջ 68:

ՈՒՂՂՈՒՄ

1968 թվականի «Էջմիածին» ամսագրի Գ համարում՝ «Օշականի եկեղեցու վերանորոգության առթիվ» խորագրով տպագրված հոդվածում, կատարել հետևյալ ուղղումը. «Այս շնորհառատ գործի հեղինակներն են երիտասարդ նկարիչներ Հովհաննես Մինասյանը և Հենրիկ Մամյանը: Օգտվելով Ամենայն Հայոց Հայրապետի գրավիչ, բայց և դժվարին ու պատվավոր առաջարկից, շուրջ չորս տարի (1961—1964 թթ.) լարված ու քրտնաջան...» շարադրանքի փոխարեն (էջ 17) կարդալ՝ «Այս շնորհառատ գործի հեղինակն է Հովհաննես Մինասյանը, օգնականը՝ Հենրիկ Մամյանը: Օգտվելով Ամենայն Հայոց Հայրապետի գրավիչ, բայց և դժվարին ու պատվավոր առաջարկից, շուրջ չորս տարի (1962—1965 թթ.) լարված ու քրտնաջան...»: